ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօների առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական օրհնութեան գրով իր շնորհաւորանքներն ու բարեմաղթանքներն է ուղղել Սիրիայի հայ համայնքի հոգեւոր առաջնորդներին, աշխարհիկ ու հոգեւոր սպասաւորներին, համայնքային պաշտօնէութեանը, ազգային վարժարանների տեսչական ու ուսուցչական կազմերին, սաներին եւ համայն սիրիահայութեանը:

«Այս օրերին, երբ քրիստոնեայ աշխարհի հետ միասին համայն հայութիւնը պատրաստւում է նշելու Սուրբ Ծննդեան տօները, Մեր մտքում ու ամենօրեայ աղօթքներում էք դուք, որ Սիրիայի ողջ ժողովրդի հետ միասին կրում էք երկրում ծայր առած հակամարտութեան ծանր ու անդառնալի հետեւանքները», - նշել է Վեհափառ Հայրապետն իր գրում:

Նորին Սրբութիւնն իր գնահատանքն է յայտնել հայորդիներին, որ հակառակ դժուարին իրավիճակի, ներկայ վտանգների, անորոշութեան ու փորձութիւնների պայմանների, շարունակում են արթուն պահել իրենց հոգեւոր ու ազգային կեանքը եւ զօրաւոր՝ նախանձախնդրութիւնը՝ մասնաւորապէս հանդէպ նոր սերնդի հայեցի կրթութեան ու դաստիարակութեան երախտարժան գործը:

«Սիրելի հայորդիներ, սիրիահայ գաղութի պատմութեան մէջ բացառիկ դերակատարութիւն են կատարել հայկական վարժարանները, որտեղ կերտուել ու ձեւաւորուել են հայորդեաց հոգիները, ներշնչուել մայրենի լեզուի եւ ազգային արժէքների հանդէպ սիրով ու նախանձախնդրութեամբ: Կոտորածներից մազապուրծ ու Եղեռն վերապրած ձեր հայրերը ամէն դժուարութիւն ու զոհողութիւն յանձն առան, որպէսզի իրենց զաւակները ուսման կարօտ չմնան: Այսօր առիթ ունենք դրուատանքով անդրադառնալու, որ նախընթաց տասնամեակների ընթացքին Սիրիայի ազգային Վարժարանները կրթել են փայլուն սերունդներ, ովքեր Սիրիայում եւ աշխարհի չորս ծագերում սփռուած, ծառայում են մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն, աւանդ բերում հայ մշակոյթի, արուեստի, գրականութեան ու գիտութեան զարգացմանը:

Վարժարանների սիրելի սաներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք յղում ձեզ եւ աղօթում ձեր ու ձեր

ծնողաց, Սիրիայի բոլոր մանուկների ապահովութեան համար: Թող ձեր ծնողների եւ ուսուցիչների նախանձախնդրութիւնը՝ հանդէպ կրթութեան գործը, խրախոյս լինի ձեզ համար, որպէսզի շարունակէք ջանադիր սովորել՝ ապագային ձեր կեանքով ու հայրենաշեն գործերով աւանդ բերելու ազգային ու հոգեւոր մեր կեանքի առաւել շինութեանն ու պայծառութեանը», - ասուած է Հայրապետական օրհնութեան գրում:

Նորին Սրբութիւնն Ամենակալ Աստծոյ զօրակցութիւնն ու պահպանութիւնն է հայցել սիրիահայ համայնքի համար՝ մաղթելով, որ Սուրբ Ծննդեան խորհրդով բացուող 2014 թուականը խաղաղութիւն ու ապահովութիւն բերի Սիրիային ու նրա ողջ ժողովրդին:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ